Նախագծային աշխատանք

Առարկա՝ կենսաբանություն
Թեմա՝ Արմավիրի մարզում հանդիպող բուժիչ բուսատեսակների ուսումնասիրումը
Հայկավանի միջնակարգ դպրոց
Դասարան՝ 7-րդ

Ուսումնական նախագծի ղեկավար՝ Շ. Սիմոնյան

Ուսումնական նախագծի նպատակը՝

- Ձևավորել սովորողների մոտ սերը դեպի բնություն:
- Ընդլայնել բույսերի բազմազանության վերաբերյալ պատկերացումները:
- Ձևավորել բույսերի հիմնական կարգաբանական խմբերի տարբերիչ առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիք:
- Սովորողների մոտ ձևավորել ընկերների կարծիքը և ցանկությունները հաշվի առնելու պատրաստակամություն, ընկերներին օգնելու կարողություն:

Ուսումնական նախագծի վերջնարդյունքները՝

Սովորողը կկարողանա՝

•Տարբերել Արմավիրի մարզի դեղաբույսերը:

•Տարբերակել բույսերի հիմնական կարգաբանական խմբերի ներկայացուցիչներին՝ ըստ արտաքին կառուցվածքի և կենսագործունեության բնորոշ առանձնահատկությունների:

•Մասնակցի բնապահպանական միջոցառումների պլանավորմանը եւ իրականացմանը:

•Նկարագրի դեղաբույսերի կիրառությունը առօրյա կյանքում և հասկանա,որ ալկալոիդները, եթերայուղերը, վիտամինները շատ կան դեղաբույսերում, որոնք առողջության անբաժանելի մասնիկն են:

•Գնահատի կայուն զարգացման ապահովման հնարավորությունները տարբեր ռեսուրսների կառավարման եւ պլանավորված օգտագործման միջոցով:

Նախագծի մասնակիցներ

1. Մարիամ Մանուկյան
2. Դավիթ Սարգսյան
3. Արտյոմ Գասպարյան
4. Անահիտ Ավետիսյան
5. Միլենա Գրիգորյան
6. Ռաֆայել Քոչարյան
7. Անի Դոլմազովա
8. Անահիտ Զաքարյան
9. Հրաչյա Աբրահամյան
10. Մարգարիտա Մկրտչյան
11. Հակոբ Սաֆարյան

I խումբ

Մարիամ Մանուկյան
Անահիտ Ավետիսյան
Ռաֆայել Քոչարյան



ԵՐԻՑՈՒԿ

Երիցուկի օգտագործման շրջանակը բավականին լայն է, քանի որ այն ունի ախտահանիչ, հակաբորբոքային, արյունը կանգնեցնող, կապող, ցավազրկող, լեղամուղ և քրտնաբեր հատկություններ, այն արագացնում է հյուսվածքների վերականգնումն ու առողջացումը, թեթևացնում է մկանային կծկումները, լայնացնում է սրտի և ուղեղի անոթները, հանգստացնում և նորմալացնում է քունը: Հաճախ երիցուկն օգտագործում են ալերգիայի, նեյրոդերմիտի, էկզեմայի, խոցի, նևրոզների բուժման, ինչպես նաև ուղեղի, սրտի կաթվածի, միգրենի և կծկումների ժամանակ:

II խումբ

Միլենա Գրիգորյան
Մարգարիտա Մկրտչյան

Խատուտիկ

Աստղածաղկավորների կամ բարդածաղկավորների ընտանիքին պատկանող, մինչև 15 սմ բարձրության բազմամյա խոտաբույս է: Տերևները բազմաթիվ են, կանաչ, նշտարաձև կամ երկարավուն, ատամնավոր եզրերով: Բույսը սկսում է ծաղկել մայիս-հուլիսին, իսկ պտուղները հասունանում են օգոստոսին: Աշնանը խատուտիկը նորից է ծաղկում մոլախոտ է, աճում է այգիներում, ցանքերում, խամահողերում, մարգագետիններում և այլուր, հաճախ տալով հոծ բուսուտներ: Բույսը լավ է աճում չափավոր խոնավ և հարուստ հողերում: Խատուտիկը իր բուժական ազդեցությամբ հայտնի դեղաբույս է: Օգտագործում են հիմնականում ծաղիկը՝ ցողունով, որը պետք է կտրել արմատին մոտ եւ լավ լվանալ, դրանից հետո կարելի է պատրաստել նաեւ աղցան: Խատուտիկը՝ դեղնավուն

III խումբ

Դավիթ Սարգսյան
Հակոբ Սաֆարյան
Արտյոմ Գասպարյան

ԴԱՂԶ

Պետք չէ դաղձը շփոթել նանայի հետ, որը մարդկանց կողմից աճեցվող բույս է: Դաղձը տարբերվում է հաճելի, փոքր–ինչ սուր հոտով, դառը համով, ծամելիս բերանում սառը զգացողություն է առաջացնում: Տերևներում պարունակվող մենթոլի շնորհիվ դաղձը կարող է կիրառվել որպես տեղային ցավազրկող միջոց: Թարմ և չորացրած տերևներն ու ծաղիկները կարող են օգտագործվել աղցաններում, ապուրներում, բանջարեղենային և մսից պատրաստված ճաշատեսակներում, ինչպես նաև սոուսներին, թեյի խառնուրդներին հաճելի բույր

IV խումբ

Անահիտ Զաքարյան
Անի Դոլմազովա
Հրաչյա Աբրահամյա

Ավելուկ

Ավելուկ մատիտեղազգիների ընտանիքի միամյա, երկամյա և բազմամյա խոտաբույսերի և թփերի ցեղ: Հայտնի է մոտ 150, ՀՀ-ում՝ 12 տեսակ՝ ավելուկ սովորական կամ թթվաշ, ավելուկ գանգուր , ավելուկ ալպիական, ավելուկ ավելուկանման, թրթնջուկ փոքր և այլն: Տարածված է ՀՀ գրեթե բոլոր մարզերում: Աճում է մարգագետիններում, նոսրանտառներում, թփուտներում, անտառեզրերիև, լեռնալանջերին, գետափերին, խոնավ վայրերում և այլն: Պարունակում է աղաղանյութեր, վիտամիններ, թթուներ, սապոնիններ, ներկանյութ և այլն: Ավելուկն օգտագործում են ժողովրդական բժշկության մեջ դիզենտերիայի, լյարդի հիվանդությունների, մարսողության խանգարման ժամանակ և սննդի մեջ (թարմ, չորացրած): Ըստ համի՝ ավելուկը լինում է դառը եւ քաղցր: Ավելուկը ժողովրդական բժշկության մեջ ամենից շատ տարածված դեղաբույսերից է, բուժական նպատակներով գործածում են ավելուկի արմատը, տերեւներն ու սերմերը: Փորացավի ու միզակապության ժամանակ փորին խաշած ավելուկ են դնում, կամ էլ ձեթով տապակում են եւ ուտում: Լուծի դեպքում խաշած ավելուկ են ուտում, իսկ ցրտից ուռած

Դեղաբույսերը, ինչպես և ցանկացած դեղորայք չարժե չարաշահել, քանի որ դրանք օգտակար հատկությունների հետ մեկտեղ ունեն նաև հակացուցումներ: Անհրաժեշտ է չկորցնել չափի զգացողությունը: Բժիշկների խորհուրդներին նույնպես պետք է հետևել՝ վերջին շրջանում ավանդական և ժողովրդական բժշկությունն ավելի շատ շփման եզրեր են գտնում: Ամեն դեպքում՝ եղե՛ք առողջ և մի՛ հիվանդացեք:

Նախագծի պրոդուկտ

Երիցուկ

Դաղձ

Խատուտիկ

Ավելուկ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ